Գերեզմանը, որ չինուած է հովտի մը մէջ, ժայռին մէջ փորուած փոքր այր մ'է. ունի այնպիսի ցած դուռ մը, ուրկէ մարդ մէջքը ծռելով հազիւ կարող կ'ըլլայ մտնել։ Այրին խորը, դրան դէմ, ժայռին մէջ կը տեսնուի փոքր նստարան մը, որուն վրայ դրուած է երանեալ Կուսին և Տիրամօր մարմինը, և ուրկէ վերափոխեցաւ յերկինս։ Այս այրը գրեթէ մարդու մը բարձրութիւն ունի, չորս կանգուն լայնութիւն և նոյնքան ալ երկայնութիւն. այրին ներսի կողմը մարմարեայ գեղեցիկ քարերով զարդարուած փոքրիկ մատուռի մը երևոյթն ունի»։ Ճիշդ Քրիստոսի Գերեզմանին նման կամարներով և սիւներով զարդարուած էր Ս. Կուսին Գերեզմանը և պսակուած ոսկիէ և արծաթէ պատուական անօթներով։ Ճոխագոյն պսակակալի մը նման՝ Ս. Կուսին Գերեզմանը շրջապատող վերնախարսխին վրայ կային արձանագրութիւններ։ Բայց Ս. Աստուածածնի եկեղեցին այս բոլոր շքեղութիւնները տեսական չեղան. 1187 ին Սալահէտտինի յաղթութենէն յետոյ, տեղւոյն եկեղեցական բոլոր մասերը, հիւանդանոցը, վերնայարկ եկեղեցին քանդուեցան և անոնց բոլոր նիւթերը գործածուեցան քաղաքին պարիսպներու խրամատները նորոգելու համար։ Ս. Կուսին Գերեզմանը և անոր մուտքը՝ մերկացած ու կապտուած ամրաշէն աշտարակներէն եւ ընդարձակ դաւիթէն, քանդումէն ազատ մնացին, բայց ջնջուեցան Գերեզմանի շուրջը և պատերուն վրայ գտնուած զարդերը։ Քիչ յետոյ եկեղեցին բոլոր դուռները քարով հիւսեցին, բացի հարաւի մեծ դուռնէն, որպէս զի ուխտաւորներու մուտքի տուրքը դիւրութեամբ կարողանան գանձել։ Շարունակական քանդումներէն յառաջ եկած հողերը փակեցին ա՛յն պատուհանները՝ որ գետնայարկի եկեղեցին ըստ բաւականի կը լուսաւորէին մինչին դարու մէջ, այնպէս որ աչքը կրնար դիւրաւ որոշել նկարները և արձանագրութիւնները։ Կեղրոնի Ջորին ձմեռնային ցուրերը այս յիշատակարանին ընդհողումին միակ պատճառը չէին կրնար ըլլալ, վասն զի արդէն 1283 ին կացութիւնը այնպէս էր որ ձորին խորքը խառնուած էր եկեղեցին դարատափին (terrasse) հետ եւ անոր վրայէն ալ ճամբայ մը բացուած էր։

Գեթսեմանիի Ս. Աստուածածնի բիւզանդական շրջանի եկեղեցին կործանուելէ յետոյ, ինչպէս վերև յիշեցինք, Խաչակրաց կողմէն կատարուած վերաշինութիւնն ալ կիսով քանդուեցաւ,